ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱԿԱՏՈՒՄ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՑՈՒՑԱ ԵՆ ՏԱԼԻՍ ԱՐԻՈՒԹՅԱՆ, ԽԻԶԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՆԹԱԼԻ ՕՐԻՆԱԿ

ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ-լուսավորչական եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանի անունով ստացված է հետևյալ հաղորդագրությունը Մոսկվայից.

«Տանկային զորամասի հրամանատար փոխգնդապետ Վոյնովսկին ուղարկել է ինձ նամակ, որի մեջ հաղորդում է հայ հոգևորականության և հավատացյալների միջոցներով կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան պատկանող տանկերի անձնակազմի մարտական գործողությունների մասին.

«Ընկ. Վոյնովսկին գրում է.

«Հայ ժողովրդի առասպելական հերոս Սասունցի Դավթի անունը կրող տանկերը գտնվում են վստահելի ձեռքերում: Գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերում տանկիստները իրենց պահել են անթառամ փառքով:

Մեր զորամասը դարնանային ուղեխափանքի դժվարին պայմաններում 10 օրվա ընթացքում մարտերով անցել է մոտ 200 կիլոմետր, ազատագրելով հարյուրավոր բնակավայրեր, ֆաշիստական ստրկությունից փրկելով հազարավոր սովետական մարդկանց:

Տանկիստներն իրենց խիզախ գրոհներով «Սասունցի Դավիթ» անվան տանկերով բազմիցս ճեղքել-անցել են հակառակորդի թիկունքը և այնտեղ առաջացրել խուճապ ու իրարանցում, գերմանացիներին ստիպելով հապճեպորեն փախչել և նետել իրենց ամբողջ տեխնիկան:

Այսպես ճեղքելով անցնելով հակառակորդի թիկունքը, տանկերը ներխուժել են Պ. քաղաքի մատույցներով հզոր հենակետ հանդիսացող N կայարանը և ջախջախել գերմանական կայազորը: Տանկիստները ամրանալով նվաճված բնակարաններում, ետ են մղել գերմանացիների բոլոր հակագրոհները և ձախողել կորցրած կայարանը վերադարձնելու նրանց բոլոր փորձերը: Հիտլերականների ջախջախումը և տանկիստների կողմից կայարանի գրավումը հակառակորդին ստիպել է ետ նահանջել նաև հարևան հատվածներում և հնարավորություն է տվել մեր զորքերին մոտենալ քաղաքին, մարտեր սկսել նրա ծայրամասերում:

Այդ մարտերում մեր զորամասը զգալի հարվածներ է հասցրել հիտլերյան զորքերին: Տասն օրվա ընթացքում «Սասունցի Դավիթ» տանկերը ոչնչացրել են 16 տանկ և ինքնագնաց հրանոթ, զանազան տրամաչափի 20 հրանոթ, 60 դնդացիր, 210 ավտոմեքենա զորքերով և բեռներով, ոչնչացրել են գերմանական ավելի քան 2.700 զինվոր ու սպա:

Անձնակազմը ցույց է տվել խիստ ռազմական վարպետություն և հմտություն, գործել է վճռականորեն, համարձակ, արիաբար ու խիզախ։

Միայն վերջին մարտերի ընթացքում ավելի քան 40 մարտիկ ու սպա պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։

Մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող ազատագրական մեծ պատերազմում սովետական մարտիկներն ու սպաները ցուցաբերում են հերոսության հրաշքներ։

Հանդիսանալով հաղթական Կարմիր Բանակի մի մասնիկը մենք առաջնակայում ևս հայ ժողովրդի առասպելական հերոս «Մասունցի Դավիթ» անունը կրող տանկերով անխոնջ կերպով կխփենք թշնամուն, նրան դուրս վռնդելով մեր երկրի սահմաններից։ Բազմապատկենք սովետական տանկիստների փառքը, սովետական ժողովրդի փառքը։

Կեցցե՛ հաղթական Կարմիր Բանակը։

Կեցցե՛ Մեծ ղեկավար, Սովետական Միության Մարշալ ՄԵՆ ՍՏԱԼԻՆԸ, որը մեր ժողովրդին տանում է դեպի վերջնական հաղթանակ գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ»։

Ձեր պատասխան նամակը կհաղորդվի «Մասունցի Դավիթ» շարասյան տանկիստներին։

Գնդապետ ԿՈԼՈՍՈՎ